

ՏԱՆԹԵՆ ԵՐ ՊԵԱԹՔԻԶԵ

« L'amore che muove il sole e l'altre stelle »

(Paradiso, XXXIII, 145)

Կրնայ միայն Պեաթքիչէն կանչել քեզ
Յաւերժաշարժ օրօրոցէդ, Ալիկիերի,
Զի Սէրն է որ ըզգլխական բուրվառի պէս
Հոգւոյդ անհուն կամարին տակ անշէջ կ'այրի:

Ճակատիդ շուրջ կրնայ միայն Պեաթքիչէն
Հիւսել փառքի վարդապըսակ, Ալիկիերի,
Զի դեռ Սիրոյ շարականնէ՛րը կը հնչեն,
Եւ շրթներուդ վըրայ համբոյրն իր կը վառի:

Ծընար ո՛չ թէ դարեր առաջ, այլ երբ դարձան
Շուրջը Սիրոյ աստղերը բիր բւ արեւներ.
Եւ քեզմով կեանքն եղաւ հանդէս անմահական,

Ուր զանգակնէ՛րը երկնաթով, դաշնահրաւէր,
Երբ Սիրոյ սուրբ գիշերին մէջ կը դողանջեն,
Օրօրոցէդ քեզ կը կանչէ Պեաթքիչէն:

ԱՐՍԵՆ ԵՐԿԱԹ



Գ Ն Ա Հ Ա Տ Ա Ն Ք

ՏԱՆԹԵՆ ԹԱՐԳՄԱՆԻԶ

Հ. ԱՐՍԵՆ ՂԱԶԻԿԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Հ. Արսեն Ղազիկեանի ուղղուած նամակներէ

Մեծ հաճոյքով եւ շնորհակալութեամբ ընդունած եմ Հովնաթանի ու
Ռուսանի երգը, որոնցմէ օրինակ մը հաճած էիք ղրկել ինծի:

Հսկայակերպ մեծցած Պաղիկիին այս քաջաշունչ ձեռնարկը, որուն չը-
նորհիւ ա՛յնքան հին ու հոյակապ քերթողներ չոր հայերէնով կըրցան երգել՝
առանց նուազեցնելու իրենց բնիկ լեզուին շուքն ու փառքը, մասնաւոր թուա-
կան մը բացառ մեր արդի գրականութեան մէջ:

Ե՞րբ հանդիսաւորապէս պիտի գնահատուի այս չքնադ գործը ամէն ա-
նոնցմէ որոնք հայ Գրչի մը արուեստն ու հանճարը կը սիրեն պանծացնել
գիտակցարար:

Փափաքելով ի սրտէ որ չուշանայ այդ օրը, կը փութամ իմ անկողն-
ընդհանրութիւններս կանխել այժմէն:

Ողջունիւ սիրոյ

Եղիշէ Արփալ. ԴՈՒՐԵԱՆ

Երուսաղէմ, 12 ապրիլ, 1925

Ձեր «Նիրելունգներուն երգը» ստացայ անսահման հաճոյքով: Կաշմակի
մօտակայ թիւերէն մէկով առիթ պիտի ունենամ անոր անգրադաւանալու:
Թարգմանելու Ձեր ճարտարութեան եւ ընտրելու Ձեր աղնիւ ճաշակին վրայ
հիացած եմ միշտ ալ. իսկ ամէն անգամ որ, առանկ ստուար հատոր մը կը գնէք
հրապարակ, ա՛յնքան սուղ ժամանակի մէջ, հիացումս պարզապէս ապշու-
թեան կը փոխուի, Ձեր աշխատասիրութեան, Ձեր աննուաճ յարատեւող ոգիին
համար: Ժամանակակից հայ մատենագրութեան մէջ ես չեմ գիտեր ուրիշ մը՝
որ Ձեզի չափ բազմաբովանդակ եղած ըլլայ: Երբեմն կը տարուի խորհելու թէ
մի գուցէ Հ. Արսեն Ղազիկեանի համար բնութիւնը մասնաւոր օրեր պարզե-
ւած ըլլայ, մեր գիտցած սովորական 24 ժամէն տարբեր: Այլապէս, ի՞նչ կեր-
պով կարելի է ա՛յնքան գործ արտադրել: Ստուգիւ, հայ մատենագրութիւնը
ա՛յնքան շատ է պարտական Ձեզ, որ որքան շնորհակալ ըլլանք, քիչ է:

Խորին յարգանք եւ ակնածանք

ՅՈՎՀ. ԱԻԱԳԵԱՆ

Նիւ Եորք, 26 Փար. 1926